ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արտաշատ համայնք **01 հունիսի 2026 թվական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ծածկագիր՝ 2.3-35) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Նշված պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողն իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված հետևյալ հիմնական գործառույթները՝

1) մշակում է համայնքի տարածքում շինարարության և բարեկարգման ոլորտներում համայնքի ղեկավարի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրային որոշումների և կարգադրությունների նախագծերը և սահմանված կարգով ներկայացնում է դրանք Բաժնի պետին.

2) իրականացնում է պատասխանատու պատվիրատուի կողմից սուբվենցիոն և համայնքապետարանի ծրագրերով իրականացվող շինարարության և բարեկարգման բնագավառներում շինարարական և նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները և իրականացնում է հեղինակային հսկողության ծառայությունների կազմակերպման մասնագիտական գործառույթներ, մասնակցում է համայնքի տարածքում Բաժնի կողմից համակարգվող բնագավառներին վերաբերող պետական ծրագրերի իրականացման գործընթացներին.

3) իրականացնում է համայնքի ճանապարհների, կամուրջների, համայնքապետարանի ծրագրերով կառուցվող նոր շենքերի և շինությունների շինարարության, փողոցների հիմնանորոգման և վերակառուցման, ասֆալտբետոնյա ծածկի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման, հետիոտնային անցումների վերանորոգման, ուսումնական հաստատությունների, մշակութային կենտրոնների, համայնքի սեփականություն հանդիսացող ջրմուղի, կոյուղու, ոռոգման, ջեռուցման համակարգերի և այլ կառույցների շինարարության, նորոգման, վերանորոգման, հիմնանորոգման և վերակառուցման, հուշարձանների պահպանման, նորոգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքները, ինչպես նաև հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների իրականացմանն առնչվող մասնագիտական գործառույթներ.

4) մասնակցում է համայնքի տարածքում համայնքապետարանի ծրագրով իրականացվող շինարարության, բարեկարգման, սպասարկման ու շահագործման ծառայությունների աշխատանքներին.

5) մասնակցում է համայնքի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքներին.

6) իրականացնում է համայնքային նշանակության գոյություն ունեցող քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար պայմանների ապահովմանն ուղղված ծրագրերը.

7) մասնակցում է շինարարության և բարեկարգման ծրագրերի և նախագծերի քննարկումներին՝ ներկայացնելով մասնագիտական եզրակացություններ, առաջարկություններ և դիտողություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջներն են՝

Բաժնի գլխավոր մասնագետն ունի բարձրագույն կրթություն:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է առնվազն մեկ օտար լեզվի ազատ և մեկ այլ օտար լեզվով կարդում, կարողանում է բացատրվել:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

Թափուր պաշտոնի առաջացման ամսաթիվն ու հիմքը՝ ՀՀ ՏԿԵ նախարարի 26.01.2026թ. N 133-Ա հրաման:

Թափուր պաշտոնի համար սահմանված հիմնական աշխատավարձի չափը՝ 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Դիմողները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը՝ բնօրինակների հետ միասին, կարող են ներկայացնել հայտարարության մեջ նշված փաստաթղթերի ներկայացման համար նախատեսված որևէ հասցեով, ներկայացնելով՝

1) գրավոր դիմում.

2) քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն.

3) դիպլոմի լուսապատճեն.

4) առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ).

5) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.

6) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն.

7) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

8) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.

9) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

10) հայտարարություն այն մասին դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն.

11) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.

Դիմողները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել աշխատանքային օրվա ընթացքում՝ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչև 18:00-ն, նշված հասցեներից որևիցե մեկով՝

1. <u>Արտաշատի համայնքապետարան</u>՝

ք.Արտաշատ Օգոստոսի 23-ի փողոց 62 շենք, 2-րդ հարկ,
քարտուղարության, անձնակազմի կառավարման
և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
հեռախոս (0235) 2-36-28

2.<u>Արարատի մարզպետի աշխատակազմ</u>՝

ք.Արտաշատ Օգոստոսի 23-ի փողոց 60 շենք, 5-րդ հարկ,
ՏԿ և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն
հեռախոս (0235) 2-34-65

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հուլիսի 1-ին, ժամը 11:00-ին, Արտաշատի համայնքապետարանում (ՀՀ Արարատի մարզ* ք.Արտաշատ Օգոստոսի 23-ի փողոց 62 շենք, 9-րդ հարկ*):

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2026 թվականի հունիսի 15-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ